

ԱՐԴՅՈՒՆ

ՄԱՏԵՎԱԿԱՐԱՆ

1899

II

47349.шт.  
3056

Սովորական հաստակութիւն № 54

1637

ՅՈՒՂԱՆԻՍ ԹՈՒՐԱՆԵԼՈՅՑ

Թ ի ժ է լ ի ս

Տպար. Կ. Մարտիրոսյանցի || Տիպogr. Կ. Մարտիրոսյանցա.

Օրբելիանովսկая ул., д. № 1|2.


1899

Дозволено цензурою. Тифлисъ, 13-го февраля 1899 г.



7 - 63

2004



## ԱՆԻՑԳԻ ՎՐԱՇԹԱԿԱԾՆՆԵՐ

(Ժող. աւանդ.)

Ս ի օր Զըղջիկն ու Ճայն եկան,  
Թէ Եկ դառնանք վաճառական:  
Ասին ու խելք խելքի տրւին,  
Հաւան կացան, պայման դըրին,  
Բայց արի տես, որ փող չունեն:  
Ճատ միտք արին՝ թէ ինչ անեն,  
Վերջը եկան Փըշի մօտը,  
Ընկան նրա ձեռն ու ոտը,  
Ու մուբհակով,  
Ճահով, կարզով  
Փող վեր առան բաւականին,  
Ինչքան պէտք էր իրանց բանին:  
Զիղջը մընաց, տընպահ դառաւ,

Շալը բոլոր փողերն առաւ,  
 Նստեց գեամին ու կանչեց Տէր,  
 Խըրիդ գընաց հեռու տեղեր:  
 Ինչոր տեղ կայ Աստծու տակին,—  
 Հաբաշ, Մըսրա, Զինումաչին,  
                                 Փարս, Հնդստան,  
                                 Արաբստան...

Ել թանկազին քիրմանի շալ,  
 Ել մարգարիտ, զմրուխտ ու լոլ,  
 Հնդու խուրմա, փստա, բաղամ,  
 Եւ... որ մէկի անունը տամ.  
 Ինչ որ տեսաւ, աչքը սիրեց,  
 Բօլ բօլ առաւ գեամին լցրեց.  
 Գեամին լցրեց հաղար բարով  
 Ու ետ եկած ճանապարհով  
 Ուրախ ուրախ գալիս էր տուն:  
 Բայց ով չարի ձախորդութիւն.—  
 Ճամբին ծովում քամի արաւ,  
 Գեամին մինչեւ երկինք տարաւ,  
 Հանեց վերեւ, բերեց ներքեւ,  
 Բացւեց, գոռաց անդունդքը սեւ,  
 Բոլոր ապրանքն, անդին ակը,

Տարաւ գըցեց ծովի տակը,  
 Միայն սովզաքեար խեղճ Շայն էր, որ  
 Աղատւեցաւ մերկ ու տըկլոր:  
 Աղատւեցաւ—փառք իր Արտօնն,  
 Բայց ինչ սրտով խեղճը դալ տուն,  
 Գայ—ինչ ասի պարտքատէրին,  
 Ոնց երևայ իր ընկերին...  
 Ու էնտեղից էլ տուն չեկաւ.  
 Ծըլիուն ծովի երեսն ընկաւ,  
 Որ զոցէ թէ մի ճար անի,  
 Գեամին էլ ետ ծովից հանի...

---

Իսկ Զդշիկը դռւռը կտրած.  
 Աչքը ճամբին, վիզը ծըռած  
 Համբում էր օրն օրի վրայ.  
 Թէ ընկերը երբ պիտի դայ:  
     Երկար նայեց,  
     Շամբէն պահեց,  
 Ճառ լու ու վատ երադ տեսաւ,  
 Մինչև պարտքի օրը հասաւ,  
 Ու, մւրհակի ըստդը ձեռին,  
 Փուշը տընկւեց կըսեր ծէրին:

— Է՛յ, բարեկամ, ի՞նչ բանի էք.  
 Զէք մտածում՝ թէ պարտք ունէք...  
 Գործ բռնեցիք — հօրս ողորմի,  
 Դէ, փողերըս տըւէք հիմի. —  
 Թուղթ էք տւել -- վախտ իմացէք,  
 Ամօթ, աբուռ, ահ ունեցէք...  
 Թալան հօ չի. մեղք եմ ես էլ...  
 Ախպէր, էսպէս բան էք տեսել.  
 Ուկի տայ մարդ իրա ձեռով՝  
 Զըկարենայ առնել զոռնվ,  
 Սրանից յետոյ դէ արի զու  
 Ու ձեռ մեկնիր աղքատ մարդու...»  
 Գոռգոռում էր ողջ թառակում,  
 Հայհոյում էր խայտառակում,  
 Ամեն մարդ էլ, ով որ լսում,  
 Հէնց մի բերան էն էր ասում.  
 — Ա՛յ ամօթ ձեզ, Զղջիկ ու Ճայ.  
 Ի՞նչ ենք լսում, վայ, վայ, վայ, վայ.  
 Անուններըդ վաճառական  
 Ու էս տեսակ խայտառակ բան...  
 Վայ, վայ, վայ, վայ,  
 Զղջիկ ու Ճայ»...

Խեղճ Զըղջիկը միշտ լսելիս  
 Սիրուը բերնով դուրս էր գալիս.  
 Բարկանում էր իրան մտքում,  
 Անիծում էր, չըքում, թըքում.  
 — Այ քո տունը քանդւի, ա Ճայ,  
 Այ դռւ դառնաս զըրողի փայ.  
 Էս ինչ բան էր, որ դու արիր,  
 Գլուխու էս ինչ փորձանք ոերիր...  
 Եւ լսըսդուս էր ամեն անգամ.  
 — Մինեղանար, Փուշ բարեկամ.

Ճատ ես կացել,

Կաց մի քիչ էլ.

Թուղթ ստացայ երէկ Ճայից,  
 Թէ դուրս եկայ Արարիայից.  
 Որտեղ որ է՝ շուտով կըդայ,  
 Դեռ մի բան էլ աւել կըտայ.  
 — Ես չեմ ուղում աւելն, ախալէր,  
 Կանխիկ համրած իմ վողը բեր.

Ճահ էք զըրել,

Վախտ էք զըրել,

Ինչ զրած ա՝ էն եմ ասում,  
 Զեզնից աւել բան չեմ ուզւում:

— ԶԷ, աղա-Փուշ,  
ԹԷ զաղ թէ ուշ —

Փողն իր կարգին, շահն իր կարգին,  
Խոկ պատիւրդ... ես իմ հողին...  
Ես յոյս ունիմ... Ասենք պարտ ենք...  
Բայց չէ ախար մենք էլ մարդ ենք...  
ԶԷ, քո արածն ով մոռանայ,  
Իր Աստւածն էլ նա կուրանայ...»  
Խելճը էսպէս լեզու ածաւ,  
Ճատ յոյս տւեց, շատ խոստացաւ,  
Ճատ սուտ ասաւ պարտքատէրին,  
Ճատ սպասեց իր ընկերին,  
Բայց ընկերը չըկայ, չըկայ:  
— Ես ինչ ցաւ էր, Աստւած վկայ.  
Ինչ իմ բանն էր՝ մըտայ մէջը,  
Որ խայտառակ ըլեմ վերջը.  
Ինչպէս սրբնեմ էս կըրակից,  
Ես ահաղին պարտքի տակից,  
                էլ ինչ ասեմ,  
                Ոնց սպասեմ...  
Կա երբ կըդայ, ինչ իմանամ,  
Ո՞ր ջուրն ընկնեմ, ում մօտ գնամ...»

Ճատ միտք արաւ,  
 Թէս դէն թըռաւ,  
 Ինչ որ տնէր տանը, հազին,  
 Ողջ հաւաքեց, տւեց պարտքին,  
 Ցիփ մերկացաւ,  
 Ել ըլպըրծաւ...

Վերջը տեսաւ որ ճար չեղաւ,  
 Թեւեր առաւ, ինքն էլ փախաւ,  
 Փախաւ-կորաւ, որ էլ էնպէս  
 Դատարկ, սնանկ ու սևերհս,  
 Ոչ պատահի պարտքատէրին,  
 Ոչ երեալ լոյս - աշխարհին:

---

Այնուհետև իր նամուսից՝  
 Խեղճ Զըղջիկը՝ փախած լուսից,  
 Ցերեկները դէս դէն թաղչում,  
 Գեւերն է միշտ մթնում թռչում,  
 Որ չերևայ իր թայ-թռչին,  
 Ոչ պատքատէր աղա Փուշին:  
 Ճայն էլ ծովում  
 Ճըչում, ծըւում,

Զուրն է մըտնում,  
 Դուրս է պրծնում,  
 Թելին տալիս —  
 Ման է գալիս,  
 Թէ մի գուցէ բաղդը բանի,  
 Կորուստն էլ ետ ջրից հանի:  
 Իսկ Փուշն արդէն յոյսը հատած,  
 Շանկ ու ատամ սուր պատրաստած,  
 Կողքովն ով որ անց է կենում՝  
 Քաշում է փէշն ու հարցընում,  
 Թէ չեն տեսել մէկն ու մէկին,  
 Են լիրը Շային կամ Զղջիկին.  
 Ու էն օրից մինչև օրս էլ  
 Մէկը մէկին դեռ չեն տեսել:





## Կ Տ Ա Կ

Պէ զրի, տէր հայր: «Յանուն հօր և որդոյ...  
(Այսպէս անիրաւ բան էք տեսել, տօ.  
Կեանքս մաշելով փող դիզեմ այսքան  
չլսի իմ ձեռքով տամ սըրաւ-նըրան...  
Բայց դէ ինչ անեմ, հետս ուր տանեմ...  
Գոնէ այս վերջին առուտուրն անեմ,  
Գուցէ կաշառեմ Աստծուն ու ազգիս,  
Յրանով փրկեմ անունս ու հոգիս)...  
Դէ զրի տէր հայր: Ուշքս դեռ վրէս,  
Կտակ եմ անում իմ ազգիս այսպէս:

Ամենից առաջ ես իմ կըտակում  
Իմ մեռած եղբօր որդոցն եմ զրկում.  
Կտակ եմ անում, որ նրանք երբէք.

Չուտեն իմ փողից և ոչ մի կոպէկ:  
 Զուր տեղը իմ դէմ դստ էին բացել,  
 Թէ իրանց բաժնին ես եմ տիրացել  
 Լաւ էր, որ հազիւ պրծայ կաշառով,  
 Մարդիկ էլ տեսան ընկել եմ շառով...

Գրի մեր ժամին մի հարիւր թուման,  
 Հետն էլ այսպիսի մի անխախտ պայման,  
 Որ եկեղեցու դաւթում ինձ թաղեն,  
 Կնոջս համար էլ կողքիս տեղ թողեն,  
 Տարին հինգ անգամ պատարագ անեն,  
 Հոգիս անպատճառ դրախտը տանեն.  
 Սրանից յետոյ հողան ինձ վըրայ,  
 Հոյակապ արձան դնել մարմարեայ,  
 Ոսկի տառերով վըրան փորազրած,  
 Թէ ազգիս համար ինչեր եմ արած:

Վանքի դպրոցին գրի մի դումար,  
 Որ իմ անունով, իմ հոգու համար  
 Որդեգիր պահեն նըրա տոկոսով.  
 Աձեն տարի գան խմբով, հանդիսով  
 Դամբանիս վրայ գովք ու ճառ ասեն,

Ազգի մեծերի շարքում ինձ դասեն,  
Պատկերս էլ կախեն դըպրոցի պատից,  
Թէկուզ մի քիչ ցած մեր հայրապետից:

Ապա այն տունը (որ կեղծ թղթէրով,  
Հոգիս սեւելով, սըտով ու գօրով,  
Իբրև պարտքի տեղ, առաջ այն խեղճից  
Ու իրան լալով դուրս արի միջից)...  
Իմ յօժար կամքով, իմ վերջի օրին  
Այն էլ տալիս եմ մեր Մայր Աթոռին,  
Որ Վեհափառը զըրի մի կոնդակ,  
Անունս սփորի աշխարհ բովանդակ  
Եւ ինձ օրհնանքի այնպէս մի գիր տայ  
Որ երկընքումն էլ Աստւած հաւատայ...

Դրանից յետոյ մի գումար գըրի  
Յօգուտ մեր ազգի խեղճ ու որբերի  
Ընկերութեանը բարեգործական,  
Որ գլուխն անշարժ մնայ յաւիտեան,  
Նըրա տոկոսը մեր մեծ տօներին.  
Բաժնեն (իմ զրկած) խեղճ ու որբերին,

Ամեն մէկին տան մի մի աբասի,  
Որ ուտի —հոգուս ողորմի ասի:

—չապա, օրհնըւած, տանու տէրտէրին  
Փամոց չես տալիս քո հոգու խէրին.  
Քանի վախտ ունես, այդ էլ ասա շուտ...  
Ասա տանըցիք տան լաւ կողոպուտ,  
Ուսկի սհաթըգ, նոր շորերը տան,  
Որ հեշտ անց կենաս դուռն արքայութեան...  
—Լաւ, տէր հայր, այդ էլ քեզ եմ կտակում,  
Որ ինձ միշտ ցիշես քո պատարագում,  
Դադաղիս վրայ մի քարոզ ասես,  
Թէ ինչ հոգեսէր, մեծ մարդ էի ես...

Այս կտակն արաւ հայ բարերարը  
Ու մեռաւ գնաց այն միւս աշխարհը.  
Միշտ երախտազէտ մեր ազգը հայոց  
Նրան հըռչակեց ազնիւ բարեգործ,  
Իր ժամի գաւթում թաղեց ու մարմար  
Արձան կանգնեցրեց իր գործքին յարմար,  
Վըրան էլ գըրեց պերճ տապանագիր.

— Ո՞հ, վսեմ հոգի, դու խաղաղ հանդիր,  
Թէև դու մեռար, բայց միշտ քո հոգին  
Հըսկում է բարձրից քո թըշւառ ազգին ...»

Բայց երբ որ գնաց այն միւս աշխարհը  
Եւ ուզեց մըտնել արդարոց շարը,  
Հանեց օրհնանքի տարած պատճէնը,  
Տէրն մեր կարդաց ու զըցեց դէնը.  
— Քո սիրտը հանիր, ասաց, հողեղէն,  
Այնտեղ են գրւած գործերը ամեն:  
Եւ մարդու սիրտը կարդաց մեր Տէրը,  
Ուր տըպւած էին նըրա գործերը.  
Կարդաց չար գործեր, — Նաև կըտակը,  
Եւ... իսկոյն դրկեց դժոխքի տակը:





## Տ Խ Ա Ւ Բ Ք Զ Ր Ա Յ Ց

Տխոնւր գիշեր, տրտոնւմ գիշեր.  
Վիշտոս ու ես ենք արթուն մենակ  
Եւ ուզում ենք մի լաւ լիշել,  
Թէ որտեղից իրար զըտանք:

—Ասա, իմ վիշտ, իմ ուեւ թախիծ,  
Այ անքաժան կեանքիս ընկեր,  
Դու որ օրից կամ որտեղից,  
Ի՞նչ դէպքով ես ինձ հետ ընկել...  
Եւ նա՝ տխոնւր սըրտիս խորքից,  
Մէկ-մէկ լիշում-պատմում է ինձ:

—Է՛ շատ վաղուց, դու չես լիշում.  
Մալրդ՝ նստած օրբանիդ մօտ՝  
Մեղմիկ լալով երգ էր ասում,

Տիսուր «նանբեկ» մելամաղձոտ,  
Որ տակաւին չես մոռացել.  
Նրա հետ եմ սիրտըդ մըտել...

Ե՛ շատ վաղուց. — Փոքր էիր դու,  
Այդ քու փոքրիկ տըղի նըման,  
Մի խաղընկեր ունէիր թով.  
Որբ տղայ էր. ողջ էլ նըրան  
Դեծում էին ու խենթ կանչում.  
Այն օրից եմ քեզ ճանաչում...

— Աղէն մի օր դուռը կըտրած  
Սպառնում էր պարտ-գիւղացուն.  
Խեղճ աղքատը. ճարը հատած,  
Զայն էր տալիս վեր — Ըստծուն,  
— Խղճա, փրկիցը — առ հոգիս, Տէր...  
Այն օրից եմ ես քեզ ընկեր...

— Մի մարդ եկաւ տոպրակն ուսին  
Տըկլոր մանչի թաթը ըրոնած.  
— Մեզ խղճացէք, սէրն Յիսուսին,  
Մեր աշխարհքից մենք հալածւած.




Թափառական եղանք այսպէս...»  
Այն օրից եմ ծանօթ ես քեզ...

— Լաւ չեմ լիշում նրան հիմայ, —  
Բարեկամ էր, ընկեր թէ կին,  
Ըհա, ասիր, միշտ իմն է սա,  
Եւ զըրկեցիր դու կաթողին,  
Բայց նա ոտքեց յոյտ էլ, սէրդ էլ.  
Այն օրից եմ ես քեզ դըտել...

— Պի օը, յանկարծ, պահ, գալկահար՝  
Քո սիրելին ընկաւ — մեռաւ.  
Դու արցունքոտ աչքով տեսար,  
Թէ ինչպէս նա հողում կորաւ,  
Էլ չիրևաց ոչ մի անգամ.  
Այն օրից ենք մենք բարեկամ...

Տխուր գիշեր, տրտում գլուխեր.  
Վիշտս ու ես ենք արթուն մենակ  
Եւ ուզում ենք մի լաւ լիշել,  
Թէ որտեղից իրար գըտանք.  
Եւ անցքերը պատմում է նա,  
Համրում է նա ու թիւ չըկայ...



## ԱՐԺԻԻՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ

(Փող. աւանդուրիւն)

Ձատ է պատահում այսպէս հրաշք բան,  
Որ ձուկ ու թռչուն, վայրենի գազան,  
Անբան անասուն, անշունչ քար ու փէտ  
Լեզու են առնում՝ խօսում իրար հետ:  
Սհա մի անգամ անտառի մէջ էլ  
Արծիւն ու Կաղնին սկսեցին վիճել,  
Թու որն իրանցից շատ տարի կապրի,  
Որն է դիմացկուն ու պինդ աւելի:  
Արծիւն ասաց ես, Կաղնին էլ թէ՝ ես...  
Երկուսն էլ յամառ ու հպարտ այսպէս՝  
Մեծ մեծ պարծեցան, սաստիկ վիճեցին,  
Վերջը այս տեսակ պայման կապեցին.  
Փամանակ դրին հինգ հարիւր տարի,  
Արքան հաւքերի, արքան անտառի,  
Որ թէ որոշած այն օրին հասնեն,  
Մէկ էլ այն օրը դան իրար տեսնեն.

Ու Արծիւն իսկոյն Կաղնուց հեռացաւ,  
 Հըգօր թևերը շարժեց—վերացաւ  
 Դէպի ամպերը, դէպի ժայռերը,  
 Ուր անց է կացնում իր լաւ օրերը:  
 Կաղնին էլ փոեց ճիւղերն երկաթի,  
 Խոր ու խոր միսեց ճանկերն արմատի,  
 Եւ այնպէս հուժկու կանգնեց անտառում,  
 Որ էլ վայր չընկնի հինգհարիւր տարում:  
 Դարե՛ր անցկացան: Եւ ահա մի օր  
 Արծիւը եկաւ ծերացած, անզօր,  
 Ծըւոցը կտրած, տըկար, հեալով,  
 Թոց թոց թևերը հազիւ քարշ տալով  
 Տեղ հաւաւ մի կերպ, նայեց դէս ու դէն,  
 Տեսաւ՝ որ Կաղնին ընկել էր արդէն:  
 Թէն թարմ ու նոր, ճիւղերն էլ կանաչ,  
 Բայց հօ ընկել էր իրանից առաջ. .  
 — Ճէց դու, ձայն տւեց, պարծենկոտ Կաղնի,  
 Դէ լաւ ճանաչիր ինձ ու քեզ հիմի.  
 Ճինգ հարիւր տարուց մի ժամ էլ դեռ կայ,  
 Խոկ դու ընկել ես, պարծենկոտ հըսկայ:  
 — Ճինգհարիւր տարի ասլրել եմ կանգնած,  
 Այդքան էլ կապրեմ այսպէս թեք ընկած,  
 Մինչև լըրանայ մի հազար տարին...»  
 Պատասխան տւեց ընկած վիթխարին:

---



## Ա Ր Ջ Ա Ռ Ո Ւ

(Հոռու խողարածների կեանքից)

Քեռի Չատին այժմ ձեր է։ Կա մի  
ժամանսկ յայտնի խողարած է եղել և այս տե-  
սակ պատմութիւններ շատ է անում իր ջա-  
հելութեան օրերից։

— Մի կերի տարի ես ու մեր Աւազը Մաս-  
րէքումը խող պահէինք. այսպէս սկսեց նա իր  
պատմութիւնը։ Պահն էլ Մասրէքայ ներքի  
մատնումն էր։ Հիմի մի աշունքւայ զիշեր բե-  
րել ենք խոզը զանն արել ու դափի դռանը  
մի կրակ վառել, որ բոցն Աստծու ոտներն  
էրում ա։ Մի լիսնեակ զիշեր ա։ Ես պկու եմ

ածում՝ էս Աւագն էլ մի դարդաբայալթի ավեր քաշել, որ սար ու ձո՞ւ գւգում են:

Մին էլ Աւագը թէ այ տղայ, էն ով ա, հրէ մի մարդ ա գալի վերի կռնիցը: Մտիկ տամ տեսնեմ, դրուստ որ մի մարդ ա գալի վերելիցը: Ամա ես էլ լսել եմ, որ արջը գողութիւն գալիս խաբելու համար առաջի երկու ոտը դոշին ա դնում, երկու ոանանի մարդի նման ա զալի, ոնց որ մարդ ըլի:

Ասի Աւագ էս ոքմին չի, արջ ա:

Թէ բօհ, չէ չէ պողեր:

Այ տղայ ասի արջ ա:

Ես՝ հա, սա՝ չէ, ես՝ հա, սա՝ չէ: Ամա նա էլ կամաց-կամաց կողքը հան մօտենում ա, ու ձեռներուս էլ թւանք չըկայ: Հլէ մին էլ էն տեսանք՝ առաջի երկու ոտը վեր դրուց, դառաւ չորսոտնանի ու, առ հա կըտառ՝ խողի կէս տեղը: Խողը ճղճղալով իրար խառնւեց, հաւաքւեց արջի վրայ:

— Ալաբաշ, բռնի հա բռնի, հրէս հա հրէս. ամեն մինս մի անձղակոթ վեր կալանք, վաղեցինք: Մի քեամար մէրուն ունէլինք. ան-

դաճ դնենք, որ սրա ճղղոցը ներքի փոսերիցն  
ա գալի: Վազ տւինք փոսերի վրայ: Անձղակո-  
թը քաշել ենք հմի էս անիրաւին վեր ենք  
հասում, տալիս ենք, ինչ անում ենք, չենք  
անում, մէրունը բաց չի թողնում. առաջներս  
խտրտած ձորն ա ընկնում: Վերջը՝ որ շատ  
տեղը նեղացրինք, չէ, թող արաւ, փախաւ:

**Մէկ էլ գիշերը մին էլ տեսնենք խոզը  
բւացրուց: Տեսնենք, ըհը՛, էլ եկաւ: Սրան մին  
էլ քշեցինք:**

**Ասի՞ Աւազ:**

**Թէ՞ ինչ ա:**

**Ասի էս անիրաւը խոզի թշնամի ա ու  
էս ա մեղ էլ ճանաչել ա, էլ հանզստացնե-  
լու չի:**

**Թէ՞ բան չունես:**

**Ասի՞ դէ կըտեսնես:**

**Այտղայ էլ որ, մէկ էլ գիշերն էլ մին էլ  
տեսնենք ետ եկաւ: Էլ սրան դարդակ ճամբու  
դրինք:**

**Ասի՞ Աւազ, տեսա՞ր, որ ասի սա մեղ հան-  
գստացնելու չի:**

Թէ՛ բա ոնց անենք:

Ասի՞ ոնցն էն ա, որ դու խողի կշտին կաց, ես գնամ տանիցը մը թւանք բերեմ, բալքի կարենանք մի բան անենք:

Թէ դէ լաւ:

Աւազը խողի կշտին կացաւ, ես գնացի, տանը մի զոռագա Բաղչասալ ալ թւանք ունէինք, վեր կալայ եկայ: Եկայ, թուշ գնացի ներքի մոշուտնին, որտեղ զիտեմ արջի տեղն ա: Ման եկայ, ման եկայ, որ զտայ ոչ, մի տեղ մի լաւ մոշուտ պատահեց, կանգնեցի, ասի մի քիչ մոշ ուտեմ: Միամիտ մոշ ուտելիս՝ Հլէ մոշը քու տակեցը մինը ֆը թացրուց ու թւանքս բռնեց: Դու մի ասիլ, զնացել եմ Հէնց անտէր արջի վրայ եմ կանգնել: Որ թւանքիս լուլիցը բռնեց, ես և կոթը պինդ բռնեցի: Հիմի նա ոլորում ա, ուղում ա կոտրի, ես էլ ոլորում եմ, որ Հէնց անեմ թւանքի ծէրը վրէն ընկնի, հուպ տամ, ծուխը փորն անեմ: Ամա անտէրը զլիսի ա ընկել, թողում չի: Ես ձղեցի, նա ձղեց, տեսայ որ բան չի դառնում, մի զափիլ ձեռս զցեցի, ասի դառթու տամ, խլեմ: Հլէ ձեռ զցեցի թէ

չէ, թանթլիկը բերուց ուսովս պատ տւուց։ Որ  
թանթլիկն ուսովս պատ տւուց, թւանքը բաց  
թողեց։ Էնքան արի թւանքի ծէրը փորին դէմ  
առաւ, չախմախը ձեռս գցեցի, ասի էս ա բա-  
նը պրծաւ։ Վերի ոտը քաշեցի, ըրթկացը, —  
տրաքեց ոչ։ Մտիկ տամ, տեսնեմ քարը վեր ա  
ընկել, կորել։ Էստեղ մէջքս կոտրեց։ Թւանքը  
բաց թողի, ասի խտրտիցն ազատւեմ, էլաւ ոչ։  
Բռնեցինք իրար։ Դէս քաշեցինք, դէն քաշե-  
ցինք։ Տեսնեմ՝ անտէրն էս ա ինձ ուտում ա։  
Զէն տւի — Ալարաշ հէյ, Ալաբաշ հէյ... Մին  
էլ տեսայ շունը կլանչելով գալիս ա։ Եկաւ,  
հասաւ։ — Ալարաշ քումակ, ասի, ինձ կերաւ...  
Հայ քեզ մատաղ, շուն, որ հասաւ մէջքին  
տւուց էլի, ոնց որ մի գիւլլա ըլի։ Ամա լինչ,  
էն շունը թէ նրա մէջքին տւած թէ էն լեռ-  
քարափին։ Բերնովը մին բուրդ ա պոկում, էլ  
եղ դրադ ըլում, էլ եղ նի հասնում։

Ոնց որ երկու փահլեւան պինդ իրար բըռ-  
նեն, բունել ենք ու աչք աչքի ենք զցել։ Ես  
էլ իմացել եմ գիտեցող մարդից, թէ արջը մար-  
դի երեսի կըթքի, որ աչքերը շաղի, շշկըլաց-

նի: Ես զիտեմ, ամա էն սհաթին մտիցս ընկել ա: Հլէ մին էլ էն տեսայ՝ կում արաւ ու ինսանի պէս երեսիս մի մեծ թքեց — թռւ: Որ թուքն աչքերս բռնեց, գլուխս դոշիս վրայ կուացրի, եղնուց էլ թանթլիկով մի թունդ սիլլայ հասցրուց, — ինձ կորցրի: Տեսայ էլ ազատւելու դուռը չըկայ, ասի ես առաջուց երեսիս վրայ վեր ընկնեմ, որ երեսս փշացնի ոչ: Չո՞նքի արջը մարդի բռնած ժամանակ երեսին ման կըգայ: Բերանսիվեր տակին վեր ընկայ: Որ տակին վեր ընկայ, շունն աւելի կատաղեց: Արջն ընկել ա ինձ վրայ, շունը ետնուց իրան ուտում ա, որտեղից բռնում ա — քեար չի անում: Դու մի ասիլ ուստա շուն ա, զիտի արջը որ տեղիցը կըխզճանայ: Մէջքին վեր էլաւ անգամներիցը բռնեց: Որ անդամներիցը բռնեց, արջը ինձ թողեց: Անտէրը մի զափիլ գաղաղեց, շանը թափ տւուց մէջքիցը վեր զցեց ու բռնեց, հուպ տւուց թէ չանչեց, էլ զիտեմ ոչ ինչ արաւ, որ բաց թողեց, շունը կլանչելով ձորն ընկաւ, փախաւ, կորաւ:

Ճունն էլ դնաց, մնացինք ես ու ինքը:

չիմի տակին երեսս բռնած միտք եմ անում:  
 Իմացել եմ, որ արջը անդամ ա զնում, տեսնի  
 շունչ կայ թէ չէ: Թէ խմանում ա որ շունչ ա  
 քաշում տակի ոքմինը, ջարդում ա, մինչեւ  
 շունչը կտրի, թէ հօ չէ, քօթկաթաղ ա անում,  
 թողում, գնում, որ հոտի, ետնա գայ հանի  
 ուտի: Ես միտք անելիս մին էլ էն տեսայ  
 զլուխը բերուց զիխիս վրայ դրուց, շունչն իրան  
 քաշեց. անդամ ա դրել: Ես էլ շունչս փորս  
 զցեցի, ոնց որ թէ մեռած եմ: Գլուխը վեր  
 քաշեց, մի քիչ կացաւ, մին էլ անդամ դրուց:  
 Էլ ետ շունչս պահեցի: Սա որ սեսաւ ես էս  
 ա մեռած եմ, ինձ թող արև ասի մտիկ անեմ, տես-  
 նեմ ուր ա գնում: Ասքս ծերպ արի, ասի մտիկ անեմ, տես-  
 նեմ ուր ա գնում: Ասում եմ հէնց ըլի մի քիչ  
 տեղ հեռանայ, վեր կենամ փախչեմ: Գնաց՝ մո-  
 տիկ ջախ ու մախ կար, փէտ կար, հաւաքեց,  
 բերուց վրէս ածաւ: Մէջքիս վրայ դրուց, շլն-  
 քիս վրայ դրուց, էլ ետ գնաց: Գնաց մի թե-  
 թեւ ցցչորի կար, էն էլ բերուց ոտներիս վրայ  
 դրուց. մին էլ ետ գնաց: Տեսնեմ մի ահաղին  
 քօթուկ կայ, չարչարում ա պոկի որ բերի էն էլ

վրէս զցի: Միտք արի, որ թէ էս քօթուկը բիրի վրէս զցի, տակին շունչս կըկտրի: Ասի քանի ուշքը քօթկումն ա վեր կենամ կորչեմ: Կամաց փորբող տալով փէտերի տակիցը դուրս եկայ, փախայ մտայ մօտիկ մամխուտը, տապ արի:

Հիմի տապ արած տեղիցը մտիկ եմ անում: Զարչարւեց, քօթուկը պոկեց ու, ոնց որ մարդը խտրտի, խտրտեց, բերուց թէ վրէս զցի: Եկաւ տեսաւ փէտերի տակին զատ չըկայ: Քօթուկը խտրտին զարմացած կանգնեց, փէտերի տակին մտիկ արաւ, չորս կուռը մտիկ արաւ, մի զափել քօթուկը վեր զցեց ու՝ թ՛ւ հա թ՛ւ, թ՛ւ հա թ՛ւ, մարդի նման թքոտում ա, ասի հալբաթ ափսոսում ա էլի:

Թ՛ւ հա թ՛ւ անելով, ճրճռացնելով ընկաւ ներքի ձորը: Եօ էլ վեր կացայ, դուրս պրծայ դէսի Աւազը: Գալիս եմ, ոնց եմ զալիս, ոնց որ հետ ածած ըլեմ: Ետ ևմ մտիկ անում. ասում եմ տեսնեմ, իս արջը զալիս չի: Հասայ զանատեղը: Էս Աւազը թէ՝ այ տղայ էդ ինչ խաբար ա, էդ ինչ ես էլէլ: Ասի՝ էլ

խարարը որն ա, քու տունը քանդիլ. էսէնց  
բան եկաւ զլուխս: Թէ բա թւանքդ ուր ա:  
Նոր տեսնեմ, որ թւանքս մտիցս ընկել  
ա, թողել եմ տեղը:

Եկանք էքոը մի քանի հոգի հաւաքուե-  
ցինք, գնացինք թւանքս ըերինք: Թւանքիս  
քարը շինեցի, պնդացրի, ասի՛ Աւագ էլ պտեմ  
գնալ: Թէ այ տղայ ձեռը վեր կալ, կըբռնի  
կըզգի: Ասի՛ հիմի սովորեցի, էնհէնց չեմ անիլ,  
որ բռնի: Թէ՛ գու գիտես:

Թւանքս վեր կալայ քարը պնդացրի ու  
գնացի: Ամա տանձի էլ կաթոցի ժամանակն  
ա: Գնացի Մասրէքայ ներքի մատնովը տւի  
Տափակ մէրու վրայ դուս եկայ. մչւանց ճաշ  
ճան եկայ, ոտնահան էլլայ, դտայ ոչ: Միտք  
արի՝ ախճէր, սա ուր կըլի քաշւած, ախր սա  
պէտք ա որ էս խողի սամթերից հեռանայ ոչ:  
Վեր կացայ, ասի ներքեւեմ մոշուտների վրայ.  
մի քիչ գնացի, մին էլ տեսնեմ, ըհը, արջի  
իզն առաջիս: Իզն ընկայ գնացի. գնամ – տես-  
նեմ հրէս մի միամօրի բարդի կրծել ա կրծել ու  
թողել: Գլխի ընկայ, որ սրանում մեղը կայ:

Վերև մտիկ տամ, տեսնեմ ճանձն արկանոցից  
բանում ա: Ասի հմի թէ իրան գտնեմ էլ ոչ,  
էս հօ ֆորս ա ու ֆորս: Մի քիչ էլ դնացի,  
տեսնեմ առաջիս մի մորմոնջաբուն ա քանզել,  
ամա հողը դեռ թաց ա: Տեսայ որ մօտեցել եմ:  
Խստեղ մի անտէր ահ ընկաւ սիրոս: Թւանքի  
քարին մտիկ տւի, աղջօթին փոխեցի առաջ  
դնացի: Հենց ոտո վոխեցի, մի թմփթըմփոց  
եկաւ: Կանդնեցի... Թալի գլխին մի լաւ մեղ-  
րատանձի կայ. տեսնեմ հրէս տակին տանձ ա  
ուտում: Խս կռանը մի տանձ ա կաթում—դէ-  
սրն ա վաղում, մըթմըթալով ծամում ա ու ան-  
գաճ դնում, էն կռանը մի տանձ ա կաթում  
դէնն ա վաղում: Մին էլ որ կանդնեց տան-  
ձի կաթոցին անգաճ դնելու, ծառի տակը մը-  
տայ, թւանքն երեսս կալայ: Տեսնեմ թւանքիս  
ծէրը տրմբումբում ա: Զէ, սիրոս պնդացրի,  
մըն էլ նշան դրի, հուպ տւի... Որ թւանքը  
տրաքեց, սա մի փիս զոռաց, զըռպըռտըտի եկաւ  
ու, առ հա կըտաս, ընկաւ ներքի ձորը: Թը-  
ւանքը մին էլ լցրի մօտիկ եռանդի գլուխը  
բարձրացայ, տեսնեմ սա ջրին ա դնում: Մին

ասի ետևիցը դնամ, մին էլ ասի նալլաթ չար  
սատանին, եարալու արջը գէշ ա, կըբռնի կը-  
փչացնի: Են ա ինչ նա դէնը դնաց, ես էլ  
ետ եկայ, էլ զիտեմ ոչ ինչ էլաւ: Աճա էն  
օրերում ձորի վրայ շատ դուզզուն պըտիտ եկաւ,  
սկէրք ա որ սատկած ըլէր:





Հիւըլ ենթարկվել այս է ախտահան

— — — 42 թ.

